ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-2

ք. Երևան

23» հունիսի 2020թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիդեք» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Ավետիսյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման ու պահպանման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Համաձայն հավելված 2-ի:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր:** Եթե երաշխիքային ժամկետի

ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **39779549 (երեսունինը միլիոն յոթ հարյուր յոթանասունինը հազար հինգ հարյուր քառասունինը)** ՀՀ դրամ, որից **6629925 (վեց միլիոն վեց հարյուր քսանինը հազար ինը հարյուր քսանհինգ)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 15 (տասնհինգ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«ԲԻԴԵՔ» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	ք. Երևան, Նեկրասովի 86
Կենտրոնական գանձապետարան	<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ	Հ/Հ 1570015559920100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00450801
Է. Կիրակոսյան ----------	Գ. Ավետիսյան ----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«23» հունիսի 2020թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-2>> գնման պայմանագրի

Ք. Երևան Նոր Նորք վարչական շրջան 8-րդ զանգվածի 21 շենքի հարակից այգու վերակառուցման աշխատանքներ
Ծավալաթերթ-Նախահաշիվ

ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Զրուցատաղավարի ապամոնտաժում	տն	0.380	47,000	17,860
2	Նստարանների ապամոնտաժում	հատ	19.000	2,350	44,650
3	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.855	3,102	2,652
	Ընդամենը	0.41			65,162
	Շին վերանորոգման աշխատանքներ				
4	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ^3	11.836	8,460	100,133

5	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 80x200մմ	գմ	591.80	4,230	2,503,314
6	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/	մ³	18.150	8,460	153,549
7	Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 5սմ հաստությամբ	մ³	18.150	11,280	204,732
8	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում 50մմ հաստությամբ	մ²	363.00	5,358	1,944,954
9	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ³	362.600	2,068	749,857
10	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	435.120	5,640	2,454,077
11	Բուսահողի փռում ձեռքով	մ²	1813.00	282	511,266
12	Սիզամարգերի տեղադրում	մ²	1813.00	188	340,844
14	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ³	15.900	45,120	717,408
15	Միաձույլ ե/բ հենապատերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ³	25.400	51,700	1,313,180
16	Ամրանի արժեքը A500c դասի Φ12մմ	տն	1.193	366,600	437,354

17	Ամրանի արժեքը Ac-1 դասի Φ8մմ	տն	0.132	376,000	49,632
18	Հենապատի բետոնե գլխադիրի պատրաստում B-15 դասի բետոնից	մ³	4.335	67,680	293,393
*19	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	27.000	4,700	126,900
*20	Աբղամանների տեղադրում ամրացումով	հատ	17.000	2,350	39,950
	Ընդամենը	74.64			11,940,542
	Մետաղական բազրիք H=90սմ L=177,9գմ				
22	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	12.707	2,820	35,834
23	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	8.895	940	8,361
24	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	7.243	3,102	22,468
25	Խճի շերտի պատրաստում	մ³	1.779	8,460	15,050
26	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ³	2.033	45,120	91,735
27	Թերթապողպատի տեղադրում	տն	0.0383	587,500	22,504

28	Մետաղական բազրիքի պատրաստում մետաղական խողովակներից	գմ	177.900	2,068	367,897
29	40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	323.78	1,034	334,786
30	30x60x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	355.80	1,128	401,342
31	20x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	635.36	470	298,618
32	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	2.379	28,200	67,084
	Ընդամենը	10.41			1,665,681
	Էլեկտրալուսավորություն /22հատ/ H=3մ				
33	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	8.800	2,820	24,816
34	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	4.400	940	4,136
35	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	8.140	3,102	25,250
36	Խճի շերտի պատրաստում	մ³	1.100	8,460	9,306
37	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ³	2.816	45,120	127,058

38	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	22.000	11,280	248,160
39	89x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	77.000	3,666	282,282
40	40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	66.000	1,316	86,856
41	Լուսատու գնդային /100Վտ լամպով/ /ԼԵԴ/	հատ	44	11,280	496,320
42	Բաժանարար տուփիկ	հատ	22.000	1,880	41,360
43	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 25Ա	հատ	22.000	3,290	72,380
44	ԱԲԲԳ 2x2,5մմ2մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	269.000	306	82,314
45	ՊՎՔ խողովակի անցկացում	գմ	269.000	282	75,858
46	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ^2	8.800	940	8,272
47	Լուսատու գնդային /100Վտ լամպով/ /առկա հենասյուների համար/ /ԼԵԴ/	հատ	4	11,280	45,120
	Ընդամենը	10.19			1,629,488
	Ոռոգման ցանց				

48	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	26.000	2,820	73,320
49	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	16.000	940	15,040
50	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	18.500	3,102	57,387
51	Ավազե նախապատրաստական շերտ պատրաստում	մ³	16.000	4,230	67,680
52	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում խողովակաշարի վրա	մ³	32.000	3,760	120,320
53	Պլաստմասե խողովակների տեղադրում Φ50մմ, փորձարկումով	զմ	185.000	611	113,035
54	Պլաստմասե խողովակների տեղադրում Φ20մմ, փորձարկումով	զմ	214.000	423	90,522
55	Ոռոգման ծորակների տեղադրում Φ50մմ	հատ	1.000	7,520	7,520
56	Ցնցուղների տեղադրում	հատ	36.000	2,350	84,600
57	Պոլիէթիլենային ձևավոր մասեր	հատ	45.000	1,504	67,680
	Ընդամենը	4.36			697,104

	Ընդամենը				15,997,977
	Շահույթ	10%			1,599,798
	Ընդամենը				17,597,775
	Սարքավորումներ				1,347,020
	Նստարան	հատ	31	35,720	1,107,320
	Աղբաման	հատ	17	14,100	239,700
	ԱԱՀ	20%			3,788,959
	Ընդամենը	100.00			22,733,754

Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան 13 շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ

Ծավալաթերթ-Նախահաշիվ

ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	3-րդ կարգի բնահողի հարթեցում մեխանիզմով	$մ^2$	1000.0	19	19,000
2	Բետոնե արահետների քանդում	$մ^3$	4.5	13,890	62,505
3	Բազալտե եզրաքարերի քանդում բետոնահիմքով 200x300մմ	զմ	58.40	787	45,961
4	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում 86,6մ2	$մ^3$	3.464	3,704	12,831

5	Խճի շերտի քանդում 86,6մ2	մ³	10.392	463	4,811
6	Բազրիքի ապամոնտաժում	գմ	47.000	417	19,599
7	Հենապատի քանդում	մ³	31.680	15,742	498,707
8	Տուֆե շարվածքով պարսպի քանդում	մ³	19.200	9,260	177,792
9	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	140.959	3,056	430,772
	Ընդամենը	10.31			1,271,977
	Շին վերանորոգման աշխատանքներ				
10	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ³	7.926	8,334	66,055
11	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 80x160մմ	գմ	396.30	4,167	1,651,382
12	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/	մ³	14.665	8,334	122,218
13	Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 5սմ հաստությամբ	մ³	14.665	11,112	162,957
14	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում 50մմ հաստությամբ	մ²	293.30	5,278	1,548,037

15	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ^3	59.600	2,037	121,405
16	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	71.520	5,556	397,365
17	Բուսահողի փռում ձեռքով	մ^2	298.00	278	82,844
18	Սիզամարգերի տեղադրում	մ^2	298.00	185	55,130
19	Կապույտ ավազե խաղահրապարակի համար	մ^3	8.800	4,630	40,744
20	B-12,5 դասի բետոնից հենապատի նորոգում	մ^3	4.323	42,596	184,143
21	Հենապատերի լավորակ ց/ավազե սվաղ	մ^2	190.700	1,667	317,897
22	Ցինկապատ պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում 0.55մմ հաստությամբ КП-21-0.55մմ /զրուցարանի տանիքածածկույթի փոխարինում/	մ^2	14.520	4,167	60,505
23	Զրուցարանի բազրիքների 2շերտ ներկում	մ^2	2.500	926	2,315
24	B-15 դասի բետոնից աստիճանների պատրաստում	մ^3	1.700	41,670	70,839
25	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով	մ^2	16.920	12,038	203,683

*26	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	6.000	4,630	27,780
*27	Աբդամանների տեղադրում ամրացումով	հատ	5.000	2,315	11,575
*28	Խաղասարքերի տեղադրում ամրացումով	հատ	5.000	6,482	32,410
	Ընդամենը	41.80			5,159,285
	Միաձույլ ե/բ հենապատ H=1,8մ 10,56զմ				
29	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	$մ^3$	2.323	8,334	19,362
30	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	8.448	42,596	359,851
31	Միաձույլ ե/բ հենապատերի պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	8.448	50,930	430,257
32	Ամրանի արժեքը A500c դասի Φ12մմ	տն	0.374	361,140	135,003
33	Ամրանի արժեքը Ac-1 դասի Φ8մմ	տն	0.023	370,400	8,410
34	Ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով	$մ^2$	35.904	926	33,247
	Ընդամենը	7.99			986,129
	Միաձույլ ե/բ հենապատ H=2,2մ 24,2զմ				

35	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ³	5.324	8,334	44,370
36	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ³	19.360	42,596	824,659
37	Միաձույլ ե/բ հենապատերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ³	26.620	50,930	1,355,757
38	Ամրանի արժեքը A500c դասի Φ12մմ	տն	0.961	361,140	346,962
39	Ամրանի արժեքը Ac-1 դասի Φ8մմ	տն	0.057	370,400	21,065
40	Ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով	մ²	91.960	926	85,155
	Ընդամենը	21.70			2,677,967
	Մետաղական բազրիք H=90սմ L=55գմ				
41	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	3.929	2,778	10,914
42	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	2.750	926	2,547
43	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	2.239	3,056	6,843

44	Խճի շերտի պատրաստում	մ³	0.550	8,334	4,584
45	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ³	0.629	44,448	27,939
46	Թերթապողպատի տեղադրում	տն	0.0118	578,750	6,854
47	Մետաղական բազրիքի պատրաստում մետաղական խողովակներից	գմ	55.000	2,037	112,035
48	40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	100.10	1,019	101,962
49	30x60x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	110.00	1,111	122,210
50	20x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	196.43	463	90,946
51	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.735	27,780	20,431
	Ընդամենը	4.11			507,264
	Մետաղական ցանկապատ 2,25x2մ, 9հատ				
52	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	0.900	2,778	2,500
53	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	0.630	926	583

54	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.513	3,056	1,568
55	Խճի շերտի պատրաստում	մ^3	0.126	8,334	1,050
56	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ^3	0.144	44,448	6,401
57	Թերթապողպատի տեղադրում	տն	0.0027	578,750	1,570
58	Մետաղական ցանկապատի պատրաստում մետաղական էլեմենտներից	տն	0.435	115,750	50,391
59	40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	44.10	1,019	44,938
60	30x60x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	40.50	1,111	44,996
61	20x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	209.70	463	97,091
62	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.435	27,780	12,094
	Ընդամենը	2.13			263,181
	Մետաղական ցանկապատ վերանորոգում 2,25x2մ, 3հատ				
63	Մետաղական ցանկապատի պատրաստում մետաղական էլեմենտներից	տն	0.073	115,750	8,399

64	40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	7.35	1,019	7,490
65	30x60x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	6.75	1,111	7,499
66	20x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	34.95	463	16,182
67	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.073	27,780	2,016
68	Գունություն ունեցող մետաղական ցանկապատի ներկում 2անգամ	տն	1.720	27,780	47,782
	Ընդամենը	0.72			89,366
	Էլեկտրալուսավորություն /12հատ/ H=3մ				
69	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	4.800	2,778	13,334
70	Բնահողի ետլիցք ձեռքով	$մ^3$	2.400	926	2,222
71	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	4.440	3,056	13,569
72	Խճի շերտի պատրաստում	$մ^3$	0.600	8,334	5,000
73	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում	$մ^3$	1.536	44,448	68,272

	B-15 դասի բետոնից				
74	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	12.000	11,112	133,344
75	89x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	42.000	3,611	151,662
76	40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	36.000	1,296	46,656
77	Լուսատու գնդային /100Վտ լամպով/ /ԼԵԴ/	հատ	24	13,890	333,360
78	Բաժանարար տուփիկ	հատ	12.000	1,852	22,224
79	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 25Ա	հատ	12.000	3,241	38,892
80	ԱԲԲԳ 2x2,5մմ2մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	200.000	278	55,600
81	ՊՎՔ խողովակի անցկացում	գմ	200.000	278	55,600
82	Մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	4.800	926	4,445
	Ընդամենը	7.65			944,181
	Ոռոգման ցանց				

83	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	26.000	2,778	72,228
84	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	16.000	926	14,816
85	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	18.500	3,056	56,536
86	Ավազե նախապատրաստական շերտ պատրաստում	մ³	10.500	4,167	43,754
87	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում խողովակաշարի վրա	մ³	21.000	3,704	77,784
88	Պլաստմասե խողովակների տեղադրում Φ50մմ, փորձարկումով	զմ	150.500	602	90,601
89	Պլաստմասե խողովակների տեղադրում Φ20մմ, փորձարկումով	զմ	134.800	370	49,876
90	Ոռոգման ծորակների տեղադրում Φ50մմ	հատ	1.000	7,408	7,408
91	Ցնցուղների տեղադրում	հատ	8.000	2,315	18,520
92	Պոլիէթիլենային ձևավոր մասեր	հատ	8.000	1,482	11,856
	Ընդամենը	3.59			443,379
	Ընդամենը 100%				**12,342,728**
	Շահույթ	10%			1,234,273

	Ընդամենը				**13,577,001**
	Սարքավորումներ				**627,828**
	Նստարան	հատ	6	35,188	211,128
	Աղբաման	հատ	5	13,890	69,450
	Խաղասարքեր	հատ	5	69,450	347,250
	ԱԱՀ	20%			2,840,966
	Ընդամենը				**17,045,795**

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------

Կ.Տ.

Կապալառու
«ԲԻԴԵՔ» ՍՊԸ
ք. Երևան, Նեկրասովի 86
<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570015559920100
ՀՎՀՀ 00450801

Գ. Ավետիսյան ----------
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 1.1
«23» հունիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-2>> գնման պայմանագրի

ՆԿԱՐԱԳԻՐ
սարքերի և սարքավորումների

Չափաբաժնի համար	Առաջարկվող սարքերի և սարքավորումների					
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը	երաշխիքային ժամկետները
2	Նստարան			<<Բիդեք>> ՍՊԸ	համապատասխան նախագծի	3 տարի
2	Աղբաման			<<Բիդեք>> ՍՊԸ	համապատասխան նախագծի	3 տարի
6	Նստարան			<<Բիդեք>> ՍՊԸ	համապատասխան նախագծի	3 տարի
6	Աղբաման			<<Բիդեք>> ՍՊԸ	համապատասխան նախագծի	3 տարի
6	Խաղասարքեր			<<Բիդեք>> ՍՊԸ	համապատասխան նախագծի	3 տարի

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
Կ.Տ.

Կապալառու
«ԲԻԴԵՔ» ՍՊԸ
ք. Երևան, Նեկրասովի 86
<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570015559920100
ՀՎՀՀ 00450801

Գ. Ավետիսյան ----------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«23» հունիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-2>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
2	Նոր Նորք վարչական շրջանի 8-րդ զանգ. 21 շենքի հարակից այգու վերակառուցման աշխատանքներ	*Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից*	*30.09.2020թ*
6	Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան 13 շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ	*Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից*	*30.09.2020թ*
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------

Կ.Տ.

Կապալառու
«ԲԻԴԵՔ» ՍՊԸ
ք. Երևան, Նեկրասովի 86
<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570015559920100
ՀՎՀՀ 00450801

Գ. Ավետիսյան ----------

Կ.Տ.

Հավելված N 3
«23» հունիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-2>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	Հ/Հ	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	Հ/Հ 900032098759	Նոր Նորք վարչական շրջանի 8-րդ զանգ. 21 շենքի հարակից այգու վերակառուցման աշխատանքներ	----	----	----	----	----	11 892 000	21 141 000	21 141 000	21 141 000	22 733 754	22 733 754	22 733 754	22 733 754
	Հ/Հ 900032098528	Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան 13 շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ	----	----	----	----	----	8 900 000	15 845 000	15 845 000	15 845 000	17 045 795	17 045 795	17 045 795	17 045 795

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
/ստորագրություն/
Կ.Տ.

Կապալառու
«ԲԻԴԵՔ» ՍՊԸ
ք. Երևան, Նեկրասովի 86
<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570015559920100
ՀՎՀՀ 00450801

Գ. Ավետիսյան ----------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«23» հունիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-2>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«23» հունիսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-2>> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

22.06.2020թ.
O.AB.100.12CIB.PIED.0.6819.20

Բենեֆիցիար՝
Երևանի քաղաքապետարան

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.6819.20
(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-2 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 3,978,000.00 (երեք միլիոն ինը հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900015000046 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-2 Պայմանագրով Պրինցիպալի կողմից ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան 30 սեպտեմբերի 2021թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-2 պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները

2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

3) սույն Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման
կենտրոնի ղեկավար՝ Սուրեն Քոչարյան

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
Հ.՝ (374 10) 56 11 11
Ֆ.՝ (374 10) 51 31 33
www.ameriabank.am
info @ ameriabank.am

HERE AND BEYOND

AMERIABANK

22.06.2020թ.
O.AB.100.12CIB.PIED.0.6820.20

Բենեֆիցիար՝
Երևանի քաղաքապետարան

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.6820.20
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-2 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 39,779,549.00 (երեսունինը միլիոն յոթ հարյուր յոթանասունինը հազար հինգ հարյուր քառասունինը) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900015000046 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Բենեֆիցիարի կողմից Պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան 29 հոկտեմբերի 2020թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/89-2 պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

3) սույն Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝ **Սուրեն Քոչարյան**

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
Հ.՝ (374 10) 56 11 11
Ֆ.՝ (374 10) 51 31 33
www.ameriabank.am
info @ ameriabank.am

HERE AND BEYOND